ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՃԻԳԵՐ

Որքան և ծանր լինէին Թիւրք-ազրբէջանեան դաւերի հետևանքները Հայաստանում, այնուամենայնիւ, անդօր էին կանգնեցնելու երկրի կենսական ուժերի զարգացումը. հայ ժողովուրդը մի ձեռքով պայքարում էր դաւադրութիւնների դէմ, միւս ձեռքով՝ վերաշինում ու կարգաւորում իր նորաստեղծ պետութիւնը: Հերոսական ճիգ, սիզիֆեան աշխատանք թափեց նա, որ ապարդիւն չկորաւ: 1919թ. տարւայ ընթացքում Հայաստանը ո՛չ միայն չխորտակուեց մահմետական գրոհից, այլ և մի շարք վայրերում տուեց շշմեցնող հակահարուածներ և ունեցաւ աչքի ընկնող գործունէութիւն արտաքին ու ներքին կեանքի ասպարէզներում: Արտաքին ասպարէզում, հայ-վրացական պատերազմի դադարելուց անմիջապէս յետոյ Եւրոպա մեկնեց Հայաստանի պատուիրակութիւնը՝ հայկական խնդիրը Հաշտութեան Վեհաժողովին ներկայացնելու համար: Փետրուար 4-ին Ա. Ահարոնեանը արդէն Փարիզում էր, ուր հայկական պահանջները արդէն վերջնական ձևակերպում էին ստացել Ազգ. Պատուիրակութեան կողմից: Այդ պահանջները չէին համապատասխանում Երևանում մշակուած պայմաններին. Երևանում որոշուել էր Վեհաժողովից պահանջել չորս վիլայէթների հողամասերից բաղկացած Հայաստան՝ ելքով դէպի Սև ծով, Ազգ. Պատուիրակութիւնը գծել էր ծովից-ծով Հայաստան՝ Մերսինից մինչև Շուշի: Եւ այդ էլ ոմանց քիչ էր թւում: Գաղութահայ մտայնութիւնը Ա. Ահարոնեանին էլ հարկադրեց տալ իր ստորագրութիւնը Ազգ. Պատուիրակութեան մշակած ծրագրին, և փետր. 12-ին, երկու պատուիրակութիւնների նախագահների ստորագրութեամբ, հայկական պահանջները ներկայացուեցին Հաշտութեան Վեհաժողովին:

Հայերը պահանջում էին՝

1. Ճանաչումը հայկական անկախ պետութեան, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարնի և Տրապիզոնի 7 վիլայէթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի հարաւակողմը և Օրդու—Սեբաստիա գծից դէպի արևմուտք գտնուող շրջանները. 2) Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել—Բերեքէթ և Ադանա՝ Ալեքսանդրեթով հանդերձ. 3) Կովկասի Հայկական Հանրապետութիւնը՝ Եղևանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Ելիզաւետպոլի նահանգի հարաւ-արևմտեան մասը, Կարսի նահանգը՝ բացառութեամբ Արդահանից հիւսիս գտնուող շրջանի: